Social Security

Ինչպես Աշխատանքը Ազդում է Ձեր Նպաստներին

2012թ.

www.socialsecurity.gov

Ինչպես Աշխատանքը Ազդում է Ձեր Նպաստներին

Դուք կարող եք ստանալ ծերության կամ կերակրողին կորցնելու կապակցությամբ Սոցիալական ապահովության նպաստներ եւ միեւնույն ժամանակ աշխատել: Սակայն, եթե դուք լրիվ կենսաթոշակային տարիքից երիտասարդ եք եւ վաստակում եք որոշակի գումարներից ավելի, ձեր եկամուտները կրճատվելու են: Կարեւոր է նշել, որ նպաստների այդ կրճատումները իրապես չեն կորչում: Ձեր նպաստը բարձրացվելու է ձեր լրիվ կենսաթոշակային տարիքում՝ հաշվի առնելով ավելի վաղ ստացված հասույթի հետեւանքով պահված նպաստները: (Կանայնք (ամուսիններ) եւ վերապրող ժառանգները, ովքեր ստանում են նպաստներ, քանի որ նրանք իրենց խնամքի տակ ունեն անչափահաս կամ հաշմանդամ երեխաներ, լրիվ կենսաթոշակային տարիքում չեն ստանում բարձրացված նպաստներ, եթե նպաստները պահվել են աշխատանքի պատճառով):

ԾԱՆՈՒՑՈՒՄ. *Եթե դուք ստանում եք սոցիալական ապահովության հաշմանդամության կամ Լրացուցիչ սոցիալական եկամուտի (SSI) վճարումներ, ապա ձեր նկատմամբ կիրառվում են տարբեր կանոններ: Ուստի դուք պետք է ամբողջ հասույթի մասին տեղեկատվությունը ներկայացնեք Սոցիալական ապահովությանը: Միեւնույն ժամանակ, տարբեր կանոններ են կիրառվում եթե դուք աշխատում եք Միացյալ Նահանգներից դուրս: Դիմեք մեկ, եթե դուք աշխատում եք (կամ նախատեսում եք աշխատել) երկրից դուրս:*

Դուք որքա՞ն կարող եք վաստակել եւ տակաւին ստանալ նպաստներ

Եթե դուք ծնվել եք 1943թ.-ի հունվարի 2-ից մինչեւ 1955թ.-ի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում, ապա ձեր լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը կենսաթոշակի ապահովագրության համար հանդիսանում է 66 տարեկանը: *Եթե դուք աշխատում եք եւ գտնվում եք լրիվ կենսաթոշակային տարիքում կամ ավելի մեծ եք, ապա դուք կարող եք պահպանել ձեր բոլոր նպաստները՝ անկախ նրանից, թե որքան եք դուք վաստակում*: Եթե դուք լրիվ կենսաթոշակային տարիքից երիտասարդ եք, ապա գոյություն ունի սահմանաչափ առ այն, թե որքան դուք կարող եք վաստակել եւ դեռեւս ամբողջությամբ ստանալ Սոցիալական ապահովության նպաստները: Եթե դուք լրիվ կենսաթոշակային տարիքից երիտասարդ եք ամբողջ 2012 թ.-ի ընթացքում, ապա 14,640 դոլարից ավելի ստացված յուրաքանչյուր 2 դոլարի համար մենք ձեր նպաստներից պետք է պահենք 1 դոլար:

Եթե ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը լրանում է 2012 թ.-ի ընթացքում, ապա 38,880 դոլարից ավելի ստացված յուրաքանչյուր 3 դոլարի համար մենք ձեր նպաստներից պետք է հանենք 1 դոլար՝ մինչեւ լրիվ կենսաթոշակային տարիքի ձեր լրանալու ամիսը:

Այս օրինակները ցույց են տալիս, թե այս կանոնները ինչպես ազդում են ձեզ՝

Ենթադրենք, որ դուք 62 տարեկան եք և 2012թ. հունվարին դիմել եք՝ սոցիալական ապահովության նպաստ ստանալու, և ձեզ նպաստ է սահմանվել՝ ամսական 600 դոլարի չափով (տարեկան 7200 դոլար): 2012 թվականի ընթացքում դուք ծրագրել եք աշխատել և վաստակել 20,800 դոլար (այսինքն՝ 14,640 դոլարի սահմանաչափից 6,160 դոլար ավելի): Այդ դեպքում մենք ձեր սոցիալական ապահովության նպաստից կպահենք 3,080 դոլար (1 դոլար՝ սահմանաչափից ավելի վաստակած յուրաքանչյուր 2 դոլարի դիմաց): Այդ նպատակով մենք կպահենք ձեր նպաստի բոլոր վճարումները՝ 2012թ. հունվարից մինչև հուլիս: Սկսած 2012թ. հուլիսից՝ դուք կստանաք Ձեր 600 դոլարի նպաստը, և այդ գումարը ձեզ կվճարվի ամեն ամիս՝ մինչև տարվա վերջ: 2013թ. մենք ձեզ կվճարենք այն լրացուցիչ 520 դոլարը, որը պահել էինք 2012թ. հունիսին:

Կամ ենթադրենք՝ տարվա սկզբի դրությամբ ձեր կենսաթոշակային տարիքը դեռ չի լրացել, բայց այն լրանալու է 2012թ. նոյեմբերին: 10 ամիսներին՝ հունվարից մինչև հոկտեմբեր, դուք վաստակել եք 39,960 դոլար: Այս ժամանակահատվածում մենք կպահենք 360 դոլար (1 դոլար՝ 38,880 դոլարի սահմանաչափից ավելի վաստակած յուրաքանչյուր 3 դոլարի դիմաց): Այդ նպատակով մենք կպահենք տարվա ձեր առաջին վճարագիրը: Սկսած 2012թ. փետրվարից՝ դուք կստանաք Ձեր 600 դոլարի

նպաստը, և այդ գումարը ձեզ կվճարվի ամեն ամիս՝ մինչև տարվա վերջ: Մնացորդ 240 դոլարը ձեզ կվճարվի 2013թ. հունվարին:

Ձեր հասույթը եւ ձեր նպաստները՝ որքան դուք ստանալու եք

Հետեւյալ աղյուսակը գաղափար է տալիս ձեզ թէ որքան նպաստ կարող եք ստանալ 2012թ.-ի թվականում ձեր ամսական նպաստների եւ հասույթի արժէքների համեմատ.

Ամբողջ տարվա ընթացքում լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքից երիտասարդ եղող մարդկանց համար		
Եթե ձեր ամսական Սոցիալական Ապահովության նպաստն է	*Իսկ դուք վաստակում եք*	*ձեր տարեկան նպաստը կը լինի*
700 դոլար	14,640 դոլար կամ նվազ	8,400 դոլար
700 դոլար	15,000 դոլար	8,220 դոլար
700 դոլար	20,000 դոլար	5,720 դոլար
900 դոլար	14,640 դոլար կամ նվազ	10,800 դոլար
900 դոլար	15,000 դոլար	10,620 դոլար
900 դոլար	20,000 դոլար	8,120 դոլար
1,100 դոլար	14,640 կամ նվազ	13,200 դոլար
1,100 դոլար	15,000 դոլար	13,020 դոլար
1,100 դոլար	20,000 դոլար	10,520 դոլար

Ո՞ր եկամուտն է հաշվի առնվում... եւ մենք երբ ենք այն հաշվի առնում

Եթե դուք աշխատում եք ուրիշի համար միայն ձեր աշխատավարձն է հաշվի առնվում Սոցիալական Ապահովության հասույթի սահմանային չափի նկատմամբ: Եթե դուք ինքնաշխատ եք, մենք միայն հաշվի ենք առնում ինքնաշխատությունից առաջացած ձեր զուտ հասույթը: Մենք հաշվի չենք առնում որոշ եկամուտներ, օրինակ՝ պետական նպաստը, ներդրումային գործունեությունից ստացված եկամուտները, կենսաթոշակային վճարումները, ամենամյա վճարումները և կապիտալի աճից ստացված եկամուտները, սակայն հաշվի ենք առնում աշխատողի մուծումները կենսաթոշակային պլան, եթե այդ մուծումները ներառված են աշխատողի անվանական աշխատավարձում:

Եթե դուք աշխատում եք աշխատավարձով, ձեր եկամուտը հաշվի է առնվում այն վաստակելու պահում եւ ոչ վճարման ժամանակ: Եթե դուք ստանաք եկամուտ այս տարի այն աշխատանքի համար որ կատարել էիք անցյալ տարում, այս եկամուտը իբր հասույթ չհաշվվում այս տարվա համար: Օրինակներ են հաւաքված հիվանդության կամ արձակուրդի վարձատրություններ եւ պարգեւաբաշխումներ:

Եթե դուք ինքնաշխատ եք, ձեր եկամուտը հաշվի է առնվում այն ստանալու (վճարվելու) պահում եւ ոչ այն վաստակելու ժամանակ, բացի այդ դէպքում երբ վճարվում եք Սոցիալական Ապահովության

կենսաթոշակի իրավասու լինելուց ետք, այն աշխատանքի համար որ կատարած էիք նախքան կենսաթոշակի իրավասու լինելը:

Հատուկ կանոն կենսաթոշակի անցնելու ձեր առաջին տարվա համար

Երբեմն տարվա կեսին կենսաթոշակի անցնող որոշ մարդիկ արդեն իսկ վաստակած կլինեն հասույթի տարեկան սահմանաիցզավելի: Այդ պատճառով գոյություն ունեն հատուկ կանոններ, որոնք ի զօրու են մեկ տարվա հասույթի նկատմամբ՝ սովորաբար կենսաթոշակի անցնելու առաջին տարում: Այդ կանոնների հետեւանքով դուք կարող եք ստանալ Սոցիալական Ապահովության նպաստ իւրաքանչիւր ամսվա համար որ դուք ամբողջությամբ կենսաթոշակի անցածւ եք՝ անկախ ձեր տարեկան հասույթից:

2012 թվականի համար լրիվ կենսաթոշակային տարիքը չլրացած անձ մը համարվում է կենսաթոշակառու, եթե իր ամսական հասույթը 1,220 դոլար է կամ ավելի նվազ: Օրինակ, Ճոն Սմիթ կենսաթոշակի է անցնում 62 տարեկանում Հոկտեմբեր 30, 2012 թվականին: Մինչեւ Հոկտեմբեր ամիսը նա վաստակելու է 45,000 դոլար:

Նոյեմբերին նա անցնում է մասնակի զբաղվածությամբ աշխատանքի, ամսական ստանալով 500 դոլար: Չնայած, որ իր հասույթը տարվա կտրվածքով շոշափելիորեն գերազանցել է 2012թ. սահմանաչափը (14,640 դոլար), նա

(շրջել)

ստանալու է Սոցիալական ապահովության վարձատրությունը սեպտեմբերից մինչեւ դեկտեմբեր ամիսների համար: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ իր հասույթը այդ ամիսներին կազմում է լրիվ կենսաթոշակային տարիքից երիտասարդ մարդկանց համար 1,220 դոլարից նվազ (նոյեմբեր կամ դեկտեմբեր): Եթե այդ ամիսներից (նոյեմբերին կամ դեկտեմբերին) որեւէ մեկում պրն. Սմիթը վաստակում է 1,220 դոլարից ավելի, ապա այդ ամսվա համար նա նպաստ չի ստանալու: Սկսած 2013թ.-ից իր նկատմամբ կիրառվելու են միայն տարեկան սահմանաչափերը:

Եթե դուք ինքնաշխատ եք, մենք նաեւ հաշվի առնում ենք ձեր մասնակցության մակարդակը ձեր սեփական գործակալության մէջ որոշելու թե արդյոք դուք կենսաթոշակառու եք: Մենք ուսումնասիրում ենք ձեր աշխատանքի ժամերը: Ընդհանուր առմամբ, եթե դուք աշխատում եք ամսական 45 ժամից ավելի, մենք ձեզ կենսաթոշակառու չենք նկատում: Կենսաթոշակառու եք եթէ աշխատում եք 15 ժամից նվազ: Իսկ եթե դուք աշխատում եք ամսական 15-ից մինչեւ 45 ժամ այնպիսի աշխատանքով որը պահանջում է շատ հմտություններ կամ էլ կառավարում եք մի մեծ գործակալություն, դուք կենսաթոշակառու չեք համարվի:

Ձեր հասույթուի փոփոխությունները մեզ տեղեկացրեք

Մենք որոշում ենք ձեր 2012 թվականի Սոցիալական Ապահովության նպաստների գումարը ձեր տրամադրած հասույթի տեղեկության համեմատ: Անմիջապես մեզ տեղեկացրեք եթե դուք կարծում եք որ ձեր 2012 թվականի հասույթը տարբերվում է նախապես մեզ ներկայացված գումարից:

Եթե ձեր աշխատանքի հիման վրա ընտանիքի այլ անդամներ ստանում են նպաստներ, ձեր հասույթը, որ դուք ստանում եք կենսաթոշակի անցնելուց ետք, կարող է կրճատել նաեւ նրանց նպաստները: Սակայն, նոյն ընտանիքի անդամների հասույթը ազդում է միայն նրանց նպաստներին:

Մեզ դիմեք եթե հարցեր ունեք ձեր հասույթը հաշվարկելու նկատմամբ: Խնդրում ենք որ երբ զանգահարեք ձեզ մոտ ունենաք ձեր Սոցիալական Ապահովության համարը:

Արդյո՞ք դուք ստանալու եք ավելի բարձր ամսական նպաստներ, եթե նպաստները պահվում են աշխատանքի պատճառով

Այո: Եթե ձեր ծերության նպաստների մի մասը պահվում է ձեր հասույթների պատճառով, ապա ձեր նպաստները բարձրացվելու են սկսած ձեր լրիվ կենսաթոշակային տարիքից, որպեսզի հաշվի առնվեն այն ամիսները, երբ պահվել են նպաստները:

Օրինակի համար, ասենք, թե դուք պահանջում եք ծերության նպաստներ 2012թ.-ին՝ ձեր 62 տարեկանը լրանալու պահին եւ ձեր վճարը կազմում է ամսական 750 դոլար: Այնուհետեւ դուք վերադառնում եք աշխատանքի եւ ունենում եք նպաստների 12 ամսվա պահում: Մենք կվերահաշվարկենք ձեր նպաստը ձեր լրիվ կենսաթոշակային տարիքում՝ 66 տարեկանում եւ կվճարենք ձեզ ամսական 800 դոլար (այսօրվա դոլարով): Կամ էլ, հնարավոր է, որ 62 եւ 66 տարեկանի միջեւ ընկած ժամանակամիջոցում դուք վաստակում եք այնչափ, որ այդ տարիների համար բոլոր նպաստները պահվում են: Այդ դեպքում սկսած 66 տարեկանից մենք ձեզ կվճարենք ամսական 1,000 դոլար:

Արդյո՞ք ձեր աւելորդ հասույթը կբարձրացնի ձեր նպաստները

Այո: Յուրաքանչյուր տարի մենք վերանայում ենք հաշվառման փաստաթղթերը Սոցիալական ապահովություն ստացողների համար, ովքեր աշխատում են: Եթե հասույթի ձեր ամենավերջին տարին ստացվում է որպես ձեր ամենաբարձր տարիներից մեկը, ապա մենք վերահաշվում ենք ձեր նպաստը եւ վճարում հասանելիք բարձրացումը: Սա ինքնաբերական գործընթաց է, և վճարումները սովորաբար կատարվում են հաջորդ տարվա դեկտեմբերին: Օրինակ՝ 2012թ. դեկտեմբերին դուք ձեր 2011թ. եկամուտների հավելում կստանաք, եթե այդ եկամուտներն ավելացրել են ձեր նպաստը: Այդ բարձրացումը կունենա հետադարձ ուժ՝ 2012թ. հունվարի նկատմամբ:

Ինչպես կապ հաստատել Սոցիալական ապահովության վարչության հետ

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մեր հրապարակումների կրկնօրինակները գտնելու համար այցելեք մեր կայքը՝ ***www.socialsecurity.gov*** կամ զանգահարեք անվճար հեռախոսահամարով **1-800-772-1213** (խուլ կամ թույլ լսողությամբ անձինք կարող են զանգահարել հեռատիպի համարով՝ **1-800-325-0778**): Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի

ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Social Security Administration
SSA Publication No. 05-10069-AM
How Work Affects Your Benefits (Armenian)
March 2012